

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

կառավարության 2003 թվականի

սեպտեմբերի 17-ի թիվ 1193-Ն որոշմամբ

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 5

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ


ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ

"07" 01 2004 թ.

գրանցման թիվ 222.160.00258

վկայական 034061848

պետական ռեգիստրի ղեկավար՝



**Հայաստանի Հանրապետության
Գյուղի և Գյուղատնտեսության
աջակցության հիմնադրամի
(ՀՀ ԳԳԱՀ)
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**



« 29 » սեպտեմբերի 2003թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2003 թվականի N 1193 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՄՆԱԴՐԱՍ ԳԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածին և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հիմնադրել Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ:

2. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին հատկացնել 100 հազ. դրամ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2003 թ. սեպտեմբերի 24
երևան

3.10.03թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ
ԲԱԶՄԵՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՐԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է:

2. Հիմնադրամն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ու «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

3. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Հիմնադրամի հիմնադիրը կատարել է 100 հազ. դրամի չափով գույքային ներդրում:

5. Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լրիվ՝	Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ.
հայերեն կրճատ՝	ՀՀ ԳԳԱՀ.
ռուսերեն լրիվ՝	Фонд содействия селу и сельскому хозяйству Республики Армения
ռուսերեն կրճատ՝	ФСССХ РА.
անգլերեն լրիվ՝	Support fund of village and agriculture of the Republic of Armenia
անգլերեն կրճատ՝	SFVA RA

6. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. երևան, Կառավարական N 3 շենք:

7. Հիմնադրամի գործունեության ժամկետը՝ անժամկետ է:

II. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8. Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում գյուղատնտեսության բնագավառի գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմանն աջակցությունը,

բ) առանձին գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը և դրանց արդյունքների ներդրմանն աջակցությունը,

գ) գյուղատնտեսության բնագավառում ռազմավարական ծրագրերի մշակումը,

դ) հանրապետության մարզերի, տարածաշրջանների և առանձին գյուղական բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց օժանդակելը,

ե) գյուղական անապահով ընտանիքներին աջակցությունը,

զ) գիտական սեմինարների, համաժողովների անցկացումը և ցուցահանդեսների կազմակերպումը,

է) ուսուցման կազմակերպման միջոցով գյուղատնտեսության մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը, տեղեկատվական ցանցի ստեղծումը,

ը) օրենքով չարգելված այլ գործունեության իրականացումը:

III. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԸ

9. Հիմնադրամը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

10. Հիմնադրամն օգտվում է իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

11. Հիմնադրամն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում հաշվարկային ու այլ հաշիվներ, իր

անվաճմամբ ու Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և այլ անհատականացման միջոցներ:

12. Հիմնադրամն իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

13. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

14. Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

ա) հրատարակչական գործ,

բ) խորհրդատվական ծառայությունների մատուցում,

գ) տեղեկատվության տրամադրում,

դ) ուսուցման կազմակերպում,

ե) գյուղացիական տնտեսություններին սերմնանյութի, տնկանյութի տրամադրման

կազմակերպում:

15. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար իրավունք ունի ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը:

16. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադրի պարտավորությունների, իսկ հիմնադիրը՝ հիմնադրամի պարտավորությունների համար:

17. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծելու ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

IV. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

18. Հիմնադրի՝ հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

19. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան:

20. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ դրամ, արտարժույթ և այլն:

21. Հիմնադրամի գույքի՝ ներառյալ ֆինանսական միջոցները, գոյացման աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ֆինանսական և նյութական ներդրումները,

բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններն ու նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

22. Հիմնադրամի յուրաքանչյուր մասնակից, իր մուծումների չափին համապատասխան, ստանում է վկայական: Հիմնադրամի կազմավորման և միջոցների հավաքագրման գործին մեծ նպաստ բերած անձանց հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից կարող են շնորհվել պատվավոր կոչումներ:

23. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա բանկերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բացել հաշվարկային և այլ հաշիվներ (այդ թվում՝ արտարժույթային):

24. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հրապարակել հաշվետվություն իր սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման մասին:

25. Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի գումարը չպետք է գերազանցի հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի 20 տոկոսը:

V. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

26. Հիմնադրամի կառավարման մարմիններն են հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և հիմնադրամի կառավարիչը՝ գործադիր տնօրենը:

27. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ խորհուրդ), որը Հայաստանի Հանրապե-

տության օրենսդրությանը համապատասխան ղեկավարում է հիմնադրամի գործունեությունը:

28. Խորհրդի առաջին կազմը կազմավորում է հիմնադիրը:

29. Խորհուրդը բաղկացած է 11 անդամից:

30. Խորհրդի իրավասություններն են՝

ա) հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

բ) հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

գ) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

դ) հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

ե) խորհրդի նոր անդամների ընտրությունը և խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

զ) խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

է) հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

ը) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների մասին որոշումների ընդունումը.

թ) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

ժ) գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը՝ առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ.

ժա) խորհրդի որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

ժբ) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

ժգ) կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

31. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

32. խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ: խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի երկու երրորդը: խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ծայների առնվազն երկու-երրորդով:

խորհրդի նիստերն արժանագրվում են: խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է սույն կանոնադրությանը և իր կողմից հաստատված կանոնակարգին համապատասխան:

33. խորհրդի անդամն իրավունք ունի՝

ա) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործադիր տնօրենի կողմից հիմնադրամի միջոցների օգտագործման մասին.

բ) հետևելու հիմնադրամի գույքի պահպանմանը, ստուգելու հիմնադրամի փաստաթղթերը, այդ թվում՝ հաշվեկշիռը, ինչպես նաև գործունեության այլ ոլորտներ.

գ) հիմնադրամի գործադիր տնօրենից ու մյուս աշխատողներից պահանջելու ցանկացած տվյալ ու հաշվետվություն:

դ) հիմնադրամի աշխատանքները բարելավելու նպատակով նրա կառավարման մարմիններ ներկայացնելու առաջարկություններ.

ե) սպառիչ տեղեկատվություն ստանալու հիմնադրամի գործունեության մասին.

զ) դուրս գալու խորհրդի կազմից:

34. խորհրդի անդամը պարտավոր է՝

ա) հոգալ հիմնադրամի հեղինակության բարձրացման մասին.

բ) աջակցել հիմնադրամի ներդրումների համալրմանը.

գ) չխախտել սույն կանոնադրության և խորհրդի կանոնակարգի պահանջները:

35. խորհրդի անդամը կարող է ունենալ օրենքով, սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

36. Հիմնադրամի գործադիր մարմինը հիմնադրամի գործադիր տնօրենն է (այսուհետ՝ գործադիր տնօրեն), որը ղեկավարում է հիմնադրամի ընթացիկ գործունեությունը և հաշվետու է խորհրդին:

37. Գործադիր տնօրենը՝

ա) առանց լիազորագրի գործում է հիմնադրամի անունից.

բ) հիմնադրամը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում և օտար-
*երկրյա պետություններում.

գ) տնօրինում է հիմնադրամի գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները՝ համաձայն խորհրդի կողմից հաստատված բյուջեի.

դ) կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

ե) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային և այլ հաշիվներ.

զ) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափը.

է) կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև.

ը) տալիս է լիազորագրեր.

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

VI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԸ

38. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը կատարվում է անկախ աուդիտորների կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ:

39. Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է անցկացվել արտահերթ աուդիտորական ստուգում:

40. Աուդիտորներն ընտրվում են մրցութային կարգով և հաստատվում խորհրդի կողմից:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

41. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

42. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը կազմակերպվում ու վարվում և հաշվապահական հաշվետվությունը կազմվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VIII. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

44. Հիմնադրամի լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒ-
ԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

- Դ. Լոքյան - ՀՀ գյուղատնտեսության նախարար
- Վ. Տերտերյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ
- Ս. Գիշյան - Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկի գլխավոր տնօրեն
- Վ. Սողոմոնյան - Ֆերմերների ազգային միությամբ նախագահ
- Հ. Բերբերյան - ՀՀ ագրոգյուղացիական միության նախագահ
- Ռ. Ղավթյան - ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ճյուղային տնտեսության ծրագրերի վարչության պետ
- Վ. Գյուլզադյան - «Սերմնաբույծ» ՍՊԸ-ի նախագահ
- Ռ. Ծառուկյան - «Մուլտի-Ագրո» ՍՊԸ-ի նախագահ
- Ս. Կարապետյան - «Արտաշատի պահածոների գործարան» ՓԲԸ-ի նախագահ
- Ա. Ափոյան - «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի նախագահ
- Մ. Ղազարյան - «Վեդի-Ալկո» ՍՊԸ-ի նախագահ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱԿԱՐ - ՆԱԽԱՐԱՐ



Մ. ԹՈՓՈՒԹՅԱՆ



260 пр. Гагарина 5-5 Ж.п.

1
2